

նալով Յարութիւն Առաջնորդը, զինք ծնողացը քովէն առեր են, կարնոյ ժողովուրդն հաւաքուեր, իր վրայ սուտ վկայութիւններ տուեր եւ զինք զըպարտեր են: Իր հակառակորդներուն մէջ կը յիշէ Տէր Պետրոս, որ կաթողիկոսին դրամական գործառնութիւնները կը կատարէր ի կարին (Գիւ Ը. 9, 11, 22, 32, 58 եւն), նոյնպէս Գրիգոր ոմն, որ Եփրիկեանց մ'՛ջ. Գրիգոր Աշան է՝ որուն Սիմէոն գրած էր կարապետ Արքեպ. Էջմիածին շրկել, եւ կամ Մըսըրլեան մ'՛ջ. Գրիգոր՝ որ Էջմիածնի գանձապետն էր ի կարին (անդ, 432), եւ Պետրոս՝ որ կը յիշուի Տէր Պետրոսին հետ իբրեւ զիրք ունեցող մէկն եւ պարտատէր Էջմիածնի ի կարին, «ուզուն Պետրոս, անուամբ (անդ, 194, 207—209): կարապետ Արքեպ. սոյն տաղին մէջ կը յայտնէ Էջմիածնի փարեալ ըլլալը եւ Սիմէոն կաթողիկոսին, որուն համար կ'աղօթէ:

կարապետ Արքեպ. այսպէս փոխադրուած է 1776ին Էջմիածին: 1777ին արդէն Ռաշտ կը գտնուի, թէ ինչ պարագաներու մէջ, կը մնայ տակաւին անձանօթ: Այստեղ նոյն տարին գրած է վերն յիշուած Ե. տաղն:

Որչափ Սիմէոն կաթողիկոսի օրով նկուն եղած է կարապետ Արքեպ. եւ արարքները սեւ գոյներով ներկայացուած են իբրեւ կասկածելի կաթողիկեայ, ինչպէս կ'երեւայ, նոյնչափ յարգուած եւ փառաւորուած է Սիմէոնի յաջորդ՝ կարնեցի Ղուկաս կաթողիկոսի առաջին տարիները (օծեալ 2 Օգ. 1780): Առաջին տարին